

Կոտայքի մարզպետը ներկայացրել է Նոր Գեղի համայնքի  
ղեկավարի նոր պաշտոնակատարին  
06.09.2018

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանի որոշմամբ՝ օգոստոսի 5-ին  
Նոր Գեղի համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար  
նշանակվեց Վարդան Պապյանը:

Իր խոսքում մարզպետը ողջունեց օրեր առաջ հրաժարականի դիմում  
ներկայացրած, համայնքի արդեն նախկին ղեկավար Ֆրոնտիկ  
Թևոսյանին՝ գնահատելով նրա ջանքերը՝ որպես վաստակավոր  
պետական գործչի:

Համայնքի նորանշանակ ղեկավար Վարդան Պապյանին  
ներկայացնելիս մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը դիմեց նաև  
համայնքապետարանի աշխատակազմին և ավագանուն՝ ընդգծելով  
հարցերին պրոգրեսիվ բարեփոխումների դիտանկյունից նայելու  
կարևորությունը:

Համայնքի ղեկավարի ժ/պ-ն էլ կարևորեց այս մոտեցումն ու  
վստահեցրեց, որ իր բոլոր որոշումների հիմքում պետք է ընկած լինի  
ընդհանուրի շահը և պատրաստ է արդյունավետ փոխգործակցության ու  
կարճ ժամանակում գոնե մտածողության ու աշխարհայացքային  
հարցերում հեղափոխական քայլերի իրականացմանն ու տեսանելի  
արդյունքների ամրագրմանը: